ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
("ՀՀՌՑ" ՓԲԸ)

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF HIGH-TECH INDUSTRY
"TELEVISION AND RADIO BROADCASTING NETWORK OF ARMENIA"
CLOSED JOINT-STOCK COMPANY
("TRBNA" CJSC)

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՑԱՆՑ
DIGITAL BROADCASTING PUBLIC NETWORK OF RA

N 28-395

07 հոկտեմբեր 2023 թ.

«ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
Հ. ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ահարոնյան

Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ ՓԲԸ/ 21.12.2022 թվականի թիվ 28-539 գրության՝ «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ-ի /Ընկերություն/ կողմից մինչև 2023թ. հունիսի 30-ը պետք է կատարվեին ՀՀՌՑ ՓԲԸ-ի և Ընկերության միջև 09.09.2021 թվականին կնքված թիվ ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/16 պայմանագրի /Պայմանագիր/ հիման վրա 13.03.2023թ.-ին կնքված Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 3 համաձայնագրի Տեխնիկական բնութագրով սահմանված Ամասիայի հեռուստակայանի տեխնիկական շենքի վերակառուցման (սեյսմազինվածության բարձրացում) և վերանորոգման աշխատանքը /Աշխատանք/, սակայն մինչև 30.06.2023թ. ներառյալ Աշխատանքը ավարտին չի հասցվել:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀՌՑ ՓԲԸ-ն հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետի պահանջները՝ 07.07.2023թ.-ին միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը: Տեղեկացնում ենք նաև, որ՝ Ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 հինգ/ բանկային օրվա ընթացքում, Համաձայն Պայմանագրի 3.4.5 և 3.4.6 կետերի՝ ՀՀՌՑ ՓԲԸ բանկային հաշվեհամարին փոխանցել 238 100 /երկու հարյուր երեսունութ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ, որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 113 095 /մեկ հարյուր տասներեք հազար իննսունհինգ/ ՀՀ դրամ՝ որպես տուգանք՝ պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Միաժամանակ տեղեկացնում ենք նաև, որ ՀՀՌՑ ՓԲԸ-ն ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ. մասնավորապես՝ Ընկերությունից ենթակա է գանձման պայմանագրի և որակավորման ապահովումները՝ համապատասխանաբար 2 310 000 /երկու միլիոն երեք հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ և 3 465 000 /երեք միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ գումարների չափով:

Հարկ ենք համարում նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյան

Կատարող՝ Մ. Նիկոլյան
ԳՄ բաժին
Հեռ. 010 654073

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 0011, ԵՐԵՎԱՆ,ՆՈՐՔ, ՀՈՎՍԵՓՅԱՆ 95 ☎ (37410) 653 773 ☎ (37410) 653 552
Hovsepian st. 95, Yerevan, Nork, 0011, Republic of Armenia E-Mail: tvn@tna.am
secretariat.trbna@hti.am